ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳԻՏԱԺՈՂՈՎ՝ ՆՎԻՐՎԱԾ 1921 Թ. ՄՈՍԿՎԱՅԻ ԵՎ ԿԱՐՍԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ 90-ԱՄՅԱԿԻՆ

Հոկտեմբերի 13-ին Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի լեփլեցուն դահլիճում տեղի ունեցավ 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերի 90-ամյակին նվիրված հանրապետական գիտաժողով: Նրա աշխատանքներին մասնակցում էին ՀՀ ԳԱԱ պատմության և արևելագիտության ինստիտուտների, Երևանի պետական համալսարանի (ԵՊՀ), Վանաձորի Հովհ. Թումանյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի (ՎՊՄԻ) գիտաշխատողները, դասախոսական և ուսանողական ամենալայն շերտերը:

Գիտաժողովում բացման խոսքով հանդես եկավ ՎՊՄԻ ռեկտոր, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գ. Խաչատրյանը: *Ողջույնի խոսք ասացին ՀՀ ԳԱԱ նախագահության խորհրդական, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս* Վ. Բարխուդարյանը *և ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ* Ա. Մելքոնյանը*: Նրանք կարևորեցին գիտաժողովի նշանակությունն ու քննվող հարցերի արդիական հնչեղությունը:*

Գիտաժողովում լսվեցին մի շարք զեկուցումներ:

ԵՊՀ պետության և իրավունքի տեսության ու պատմության ամբիոնի վարիչ, իրավաբանական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Վաղարշյանը *հանդես եկավ «Քաղաքականության իրավաօրինականությունը որպես ազգային պետականության կայացման պայման» զեկուցմամբ, որտեղ ներկայացրեց Հայաստանի առաջին հանրապետությունում 1919 թ. մայիսին Միացյալ և անկախ Հայաստանի հռչակման գործընթացում իրավական, ընթացակարգային ձևի պահպանման հիմնահարցերը: Ուսումնասիրությունը հիմք է տալիս հաստատելու, ասաց նա, որ ՀՀԴ-ի գործունեության անդրկուլիսային գործելակերպը կազմակերպված, ծրագրված քաղաքական դավադրություն էր հանրապետության դեմ՝ իշխող կուսակցության մենատիրության հաստատման համար: Այդ են վկայում օրենսդիր մարմնի աշխատանքների նպատակային ձախողումը, վարչապետությունից Հ. Քաջազնունու մեկուսացումը և Ա. Խատիսյանի կողմից նրա լիազորությունների յուրացումը, կառավարության կողմից, շրջանցելով խորհրդարանը, սահմանադրական կարևորագույն նշանակության իրավական երկու ակտի ընդունումը («Անկախ և միացյալ Հայաստանի» ակտը, «Հայաստանի խորհրդի կազմը 12 ներկայացուցիչներով ուժեղացնելու մասին» օրենքը)՝ առանց դրանց քաղաքական անհրաժեշտության լուրջ քննարկումների՝ խախտելով ակտերի ընդունման օրինականության և՛ բովանդակային, և՛ ընթացակարգային-ձևային պահանջները: Եթե Միացյալ և անկախ Հայաստանի հռչակման գործընթացները տեղի ունենային իրավական օրինականության հունով, ապա դրանք չէին հանգեցնի դաշնակցական*

մենիշխանությանը, խորհրդարանում քաղաքական բազմազանության վերացմանը, ազգային համերաշխության խարխլմանը և, հետևաբար, մնացած քաղաքական ծանրակշիռ ուժերի օտարմանը: Հետևանքներ, որոնք թուրքական հարձակման և մեծամասնական շարժման մշտական սպառնալիքի պայմաններում, որպես ներքին գործոններ, նպաստեցին հանրապետության անկմանը:

ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ռ. Սաֆրաստյանի *զեկուցումը նվիրված էր «Հայաստանը քեմալականների ռազմաքաղաքական ծրագրերում» հարցին: Զեկուցման մեջ հայրենական պատմագիտության շրջանակներում առաջին անգամ քննության էին առնվել քեմալականների կողմից 1919–1920 թթ. Հայաստանի Հանրապետության դեմ իրականացվելիք գործողությունների ծրագրերը: Զեկուցողը նշեց, որ գոյություն են ունեցել երեք ծրագիր: Առաջինը ստեղծվել է 1919 թ. մայիսի վերջերին և տեղ է գտել Մուսթաֆա Քեմալի կողմից Արևելքում տեղակայված քեմալականների ռազմական երեք կորպուսների հրամանատարներին ուղղված գաղտնի հրամանում: Այն ունի պաշտպանական բնույթ, քանի որ քեմալականների զորքերը դեռևս շատ թույլ էին, և մտավախություն կար, որ Անտանտը կգործի Հայաստանի հետ համատեղ: Երկրորդ ծրագիրը ձևավորվել է 1920 թ. փետրվար–մայիս ամիսների ընթացքում և իր վերջնական ձևակերպումը ստացել է հունիսի սկզբներին քեմալականների կառավարության կողմից Հայաստանի վրա հարձակում ձեռնարկելու վերաբերյալ ընդունված որոշման տեսքով: Այն նախատեսում էր վերադարձնել Կարսի մարզը: Երրորդ ծրագիրն ի հայտ եկավ որպես արդյունք պատերազմի ընթացքում Կարսի գրավման և նպատակ ուներ, ինչպես նշվում էր մեր երկիր ներխուժած թուրքական բանակի հրամանատար Քյազըմ Քարաբեքերին ուղղված՝ Անկարայից ստացված հույժ գաղտնի հրամանում, «վերացնել Հայաստանը նյութապես և քաղաքականապես»: Այս էր քեմալականների վերջնական նպատակը Հայաստանի նկատմամբ: Զեկուցման վերջում Ռ. Սաֆրաստյանը նշեց, որ պատմության դասերը երբեք չպետք է մոռանալ:*

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի փոխտնօրեն, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Կ. Խաչատրյանը *հանդես եկավ «Հայաստանը Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության ոլորտում» զեկուցմամբ: Անդրկովկասյան տարածաշրջանում Խորհրդային Ռուսաստանի արևելյան քաղաքականության աշխուժացման առաջին լուրջ արդյունքն Ադրբեջանի խորհրդայնացումն էր 1920թ. ապրիլի 28-ին, ասաց նա: Դրանում Խորհրդային Ռուսաստանին մեծ աջակցություն էր ցույց տվել Մուստաֆա Քեմալի գլխավորած Թուրքիայի նորաստեղծ Ազգային մեծ ժողովի կառավարությունը: Խորհրդային Ադրբեջանը Մոսկվայի կողմից հայտարարվեց Արևելքում «հեղափոխության առաջամարտիկ»: Քանի որ, ըստ բոլշևիկների՝ իմպերիալիստական Արևմուտքի դեմ պայքարում մեծ էր լինելու մուսուլմանական Արևելքի դերը, այստեղ արդեն «առաջամարտիկը» պետք է դառնար քեմալական Թուրքիան: Համագործակցության առաջին փուլում բոլշևիկաքեմալական հարաբերությունները պայմանավորվելու էին «հակաիմպերիալիստական պայքարի*

նշանաբանով»: Սակայն եթե քեմալական Թուրքիայի հետ դաշինքը բոլշևիկներին անհրաժեշտ էր տարածաշրջանում սեփական ազդեցությունը տարածելու, համաշխարհային հեղափոխությունը դեպի Արևելք զարգացնելու, մուսուլմանական աշխարհն Արևմուտքի դեմ հանելու համար, ապա քեմալականներին այլ բան էր հարկավոր, այն է՝ բոլշևիկներից ռազմաքաղաքական աջակցություն և նյութական օժանդակություն ստանալով՝ ամրապնդել սեփական իշխանությունը Թուրքիայում, նորանոր տարածքներ նվաճել Հայաստանում:

Հայ-թուրքական սահմանի որոշման հարցը, այնուհետև ասաց զեկուցողը, Ռուսաստանի իշխանությունները կապում էին խորհրդաքեմալական հակաիմպերիալիստական դաշինք ստեղծելու խնդրի հետ, այն կազմում էր բոլշևիկների արևելյան քաղաքականության առանցքը: Թուրքիան և «ամբողջ Արևելքը» խորհրդայնացնելու բոլշևիկյան ծրագրերը դեռևս շարունակում էին օրակարգում մնալ, թեև դրանց մասին չէր բարձրաձայնվում: Իսկ այդ ծրագրերի իրականացման գործում որոշակի դեր կարող էր ունենալ նաև սոցիալիստական Հայաստանը: Մոսկվայի և Կարսի ոչ օրինական պայմանագրերով սոցիալիստական Հայաստանը դարձավ խորհրդային արևելյան քաղաքականության «փրկագինը», շղթայվեց «համաշխարհային հեղափոխության» սնանկ գաղափարախոսությամբ: Հայաստանի սահմանների որոշման հարցում Խորհրդային Ռուսաստանը չպաշտպանեց հայ ժողովրդի շահերը, դրանք զոհաբերեց քեմալական Թուրքիայի հետ համագործակցության վրա հիմնված իր արևելյան քաղաքականության հեռահար նպատակներին: Ոչ միայն Արևմտյան, այլև Արևելյան Հայաստանի պատմական տարածքների զգալի մասը մնաց Թուրքիայի և Ադրբեջանի կազմում, դրանով իսկ տարածաշրջանում ուժեղացավ թուրք-ադրբեջանական գործոնը, թուլացավ՝ հայկականը:

ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի բաժնի վարիչ, պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Ա. Մարուքյանը *զեկուցում կարդաց «Մոսկվայի և Կարսի պայմանագրերի միջազգային-իրավական գնահատականը» թեմայով: Միջազգային պայմանագրային իրավունքն ամբողջականացնող հիմնական միջազգային փաստաթուղթ համարվող Վիեննայի 1969 թ. մայիսի 23-ի «Միջազգային պայմանագրերի իրավունքի մասին» կոնվենցիայի տեսակետից, ասաց նա, 1921 թ. Մոսկվայի և Կարսի պայմանագրերը ստորագրվել են միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների կոպիտ խախտումներով: Նշված փաստաթղթերը հակաօրինական են նաև դրանց ստորագրման պահին գործող միջազգային իրավական նորմերի ու սկզբունքների տեսակետից: Մոսկվայի պայմանագիրը ստորագրվեց առանց Հայաստանի մասնակցության, իսկ որևէ պայմանագիր կարող է պարտավորություն դնել միայն այն ստորագրող կողմերի, այլ ոչ թե երրորդ կողմի վրա: Հայաստանն այդ պայմանագրի կողմ չէր, հետևաբար՝ հայկական հողերի հանձնումը չի կարող համարվել պարտավորություն Հայաստանի համար, եթե անգամ անտեսենք այն հանգամանքը, որ տվյալ պայմանագրով խախտվել է ազգերի ինքնորոշման իրավունքը: Խորհրդային Ռուսաստանը Մոսկվայի պայմանագիրը ստորագրել է նաև ներպետական իրավական ակտերի խախտումով: Պայմանագրի 15-րդ հոդվածով*

Ռուսաստանը պարտավորվում էր դիմել քայլերի, որպեսզի Անդրկովկասի ինքնիշխան պետությունները և, մասնավորապես, Հայաստանը իրավաբանորեն ճանաչեն Թուրքիայի հետ կնքած իր ապօրինի գործարքը, ինչը նույնպես միջազգային իրավունքի նորմերի կոպիտ խախտում է: Մոսկվայի ապօրինի գործարքի հավելվածը համարվող Կարսի փաստաթուղթը բառացի կրկնում ու վերարտադրում էր Մոսկվայի պայմանագրի հոդվածները և այդ ճանապարհով «օրինականացնում էր» Մոսկվայի բոլշևիկաբեմալական գործարքը:

Կարսի պայմանագրի հոդվածների միջև եղած հակասությունները, Թուրքիայի կողմից Կարսի փաստաթղթով ստանձնած պարտավորությունները չկատարելն ու նաև որոշ դրույթների խախտումները, վերջում նկատեց զեկուցողը, հիմք են տալիս Հայաստանի Հանրապետությանը՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտի, միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների շրջանակներում ձեռնարկել որոշակի քայլեր այդ ոչ հայանպաստ փաստաթղթերի սպառնալիքները չեզոքացնելու կամ գոնե մեղմելու համար:

Մոսկվայի և Կարսի խորհրդաժողովների համատեքստում որոշակի հետաքրքրություն է ներկայացնում 1921 թ. Կարսի կոնֆերանսի դիվանագիտական նախապատրաստումը, որի լուսաբանմանն էր նվիրված ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող, ՀՊՏՀ պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ա. Հակոբյանի *զեկուցումը: Դա մի գործընթաց էր, որը տևել է շուրջ 7 ամիս: Բանախոսը ցույց տվեց, որ թեև Մոսկվայում կնքվել էր թուրքերի համար շատ նպաստավոր պայմանագիր, որով, ի դեպ, Խորհրդային Ռուսաստանի համաձայնությամբ Թուրքիան Հայաստանից բռնազավթում էր 20,7 հազար կմ² արևելահայ բնիկ տարածք, բայց և այնպես թուրք դիվանագետներն ամիսներ շարունակ ձգձգում էին թուրք-անդրկովկասյան կոնֆերանսի հրավիրումը: Հիմնավոր ու համոզիչ փաստարկներով բացահայտվեցին դրա խորքային պատճառները, այդ խնդրում թուրք դիվանագիտության նկրտումները և մարտավարական քայլերը: Թուրքերը ձգձգում էին կոնֆերանսի հրավիրումը՝ սկզբում պահանջ դնելով ոչ թե միասնական, այլ անջատ պայմանագրեր կնքել. նպատակը կովկասյան հանրապետություններից (հատկապես՝ Հայաստանից) լրացուցիչ օգուտներ կորզելն էր: Մյուս կողմից՝ թուրքերը, ձգձգելով կոնֆերանսի հրավիրումը, միաժամանակ երկակի դիվանագիտական խաղեր խաղալով, գաղտնի բանակցում էին Անտանտի տերությունների հետ, որոնք սկսվել էին 1921 թ. փետրվարից Բեքիր Սամիի կողմից Լոնդոնի կոնֆերանսում, որպեսզի Ռուսաստանին վախեցնելով՝ իրենց համար լրացուցիչ շահ քաղեն: Վերջապես, նրանց համար Կարսի կոնֆերանսի հրավիրման հարմար պահ է համարվել 1921 թ. սեպտեմբեր-հոկտեմբերը, երբ դրա նախօրյակին թուրքական բանակը Անգորայի մատույցներում՝ Սակարիայի ահեղ ճակատամարտում, հաղթանակ էր տարել հույների հանդեպ, ինչը նրանց բարոյահոգեբանական առավելություն տվեց՝ կոնֆերանսում հանդես գալ դարձյալ նախապայմաններ դնողի ու պահանջողի դերում: Պատմական զուգահեռներ անցկացնելով՝ Ա. Հակոբյանն նդհանրական գծեր նշմարեց այն ժամանակվա*

Կարսի կոնֆերանսի դիվանագիտական նախապատրաստական գործընթացի և մեր ժամանակների հայ-թուրքական բանակցությունների ու 2009 թ. հոկտեմբերի 10-ի մեռելածին արձանագրությունների միջև:

ՎՊՄԻ պատմության ամբիոնի վարիչ, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ֆ. Մովսիսյանը *հանդես եկավ «Հայկական տարածքների վերադարձման պահանջը Թուրքիային 1945 թ. Պոտսդամի կոնֆերանսում» զեկուցումով: 1945 թ. գարնանը, երբ Խորհրդային Միության հաղթանակը Գերմանիայի նկատմամբ դարձավ ակնհայտ, ԽՍՀՄ առաջնորդ Ի. Ստալինը որոշեց Խորհրդային Միության նկատմամբ բռնած դիրքորոշման համար «պատժել» Թուրքիային և չեղյալ հայտարարեց 1925 թ. դեկտեմբերի 17-ի խորհրդաթուրքական բարեկամության ու չեզոքության մասին պայմանագիրը: Թուրքիան Խորհրդային Միությանն առաջարկեց կնքել դաշնակցային պայմանագիր: Դրան պաշտոնական Մոսկվան հակադրեց իր պայմանը, այն է՝ վերադարձնել Թուրքիային անցած Կարսը, Արդվինը և Արդահանն ու վերանայել 1936 թ. Մոնթրյոյի համաձայնագիրը, որից հետո միայն կարող էր քննարկվել խորհրդաթուրքական նոր պայմանագրի կնքման հարցը: Այլ խոսքով՝ Պոտսդամում Ստալինը պահանջում է վերականգնել 1914 թ. սահմանը, սակայն ոչ մի խոսք Սուրմալուի գավառի մասին: ԽՍՀՄ-ի այս պահանջը նախ դարձավ խորհրդաթուրքական բանակցությունների առանցքը, ապա քննարկվեց Մեծ եռյակի երկրների ղեկավարների հրավիրած Պոտսդամի կոնֆերանսում: Հայկական տարածքների վերադարձման հարցը նաև քննարկեցին ԽՍՀՄ արտգործժողկոմ Վ. Մոլոտովը և Մեծ Բրիտանիայի արտգործնախարար Ա. Իդենը: Հուլիսի 22–23-ին այդ հարցը դարձավ քննարկման առարկա կոնֆերանսի վեցերորդ և յոթերորդ նիստերում՝ այս անգամ երեք պետությունների ղեկավարների մասնակցությամբ: Ըստ զեկուցողի՝ Հայկական հարցի լուծումը կոնֆերանսում ի սկզբանե հեռանկար չուներ: Կոնֆերանսի նախօրեին Թուրքիան ԽՍՀՄ-ի տարածքային պահանջի մասին դիվանագիտական աղբյուրներով տեղեկացրել էր ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի կառավարություններին, որոնք, ելնելով իրենց աշխարհաքաղաքական շահերից, որոշել էին Թուրքիային սատարել ու ԽՍՀՄ-ի նկատմամբ ընդդիմադիր քաղաքականություն որդեգրել: Պոտսդամի կոնֆերանսում Խորհրդային Միության դեմ «ատոմային դիվանագիտության» քաղաքականություն սկսվեց: ԱՄՆ-ի և Մեծ Բրիտանիայի ռազմական պլաններին ու ծրագրերին տեղեկացված լինելով՝ Ի. Ստալինը հարկադրված եղավ հայկական տարածքների վերադարձման հարցի քննարկման ժամանակ չշարունակել բանավեճն ու կենտրոնանալ սնծովյան նեղուցների օգտագործման խնդրի կարգավորման վրա՝ իրեն ձեռնտու տարբերակով:*

Պոտսդամի կոնֆերանսում հայկական տարածքների վերադարձման հարցը Խորհրդային Միության նախաձեռնությամբ թեպետ միջազգայնացվեց, բայց լուծում չստացավ: Միաժամանակ այն վերջնականապես չփակվեց, ԱՄՆ-ի նախագահ Հ. Թրումենի ու Անգլիայի վարչապետ Չերչիլի առաջարկությամբ այն համարվեց Խորհրդային Միության և Թուրքիայի ներքին խնդիրը, որը պիտի կարգավորվեր բանակցային գործընթացի

ճանապարհով: Այդ նշանակում էր, որ Հայկական հարցն այս անգամ էլ ԱՄՆ-ի և Անգլիայի ջանքերով թաղվեց պատմության գիրկը:

Զեկուցումների շուրջ տեղի ունեցավ մտքերի աշխույժ փոխանակություն, տրվեցին հարցեր, հնչեցին պատասխաններ և պարզաբանումներ. դրան բուռն մասնակցություն ունեցան ոչ միայն դասախոսները, այլև ուսանողները:

Գիտաժողովի արդյունքները հանգամանորեն ամփոփեց ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի տնօրեն, ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ Ա. Մելքոնյանը՝ *շեշտելով քննարկվող հարցերի խիստ արդիական հնչեղությունը թուրք-հայկական արձանագրությունների կոնտեքստում:*

ԱՆՈՒՇԱՎԱՆ ԶԱՔԱՐՅԱՆ
ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ